

ՔԱՂԿԵԴՈՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ
Հոկտեմբեր 22, 451

Մենք, ուրեմն, հետեւելով սուրբ հայրերուն, միաբան, կը սորվեցնենք մարդոց դաւանիլ

մէկ եւ նոյն Որդին՝ մեր Տէրը Յիսուս Քրիստոս,

որ կատարեալ է, թէ՛ աստուածային, թէ՛ մարդկային բնութեամբ,

ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ, բանական հոգիով եւ մարդկային մարմինով.

համագոյակից Հօր՝ ըստ աստուածային բնութեան,

եւ համագոյակից մեզի՝ ըստ մարդկային բնութեան.

ամէն բանի մէջ մեզի նման, բացի մեղքէն.

ըստ աստուածութեան՝ ի յաւիտենից սերած Հօրմէն,

եւ այս վերջին օրերուն մէջ, մեզի համար ու մեր փրկութեան համար,

ծնաւ Կոյս Մարիամէն՝ Աստուածածին ըստ մարդկային բնութեան,

եւ մէկ ու նոյն Քրիստոսը, Որդի, Տէր, Միածին,

որ պիտի դաւանուի երկու բնութեամբ՝ անշփոթ, անփոփոխ, անբաժան, անանջատ:

Երկու բնութեանց միութիւնը զանազանութիւնը չի խափաներ,

այլ երկու բնութիւններուն յատկանիշերը պահուած են եւ կը համընկնին մէկ անձի մէջ ու մէկ նիւթի եւ մէկ գոյացութեան մէջ,

ո՛չ անջատուած կամ բաժնուած երկու անձերու միջեւ, այլ մէկ եւ նոյն Որդին, Միածին, Բանն Աստուած, Յիսուս Քրիստոս Տէրը,

ինչպէս մարգարէները նախապէս յայտարարեցին անոր մասին, Տէր Յիսուս Քրիստոս՝ ինքը մեզի սորվեցուց եւ հայրերուն հաւատամքը զայն մեզի աւանդեց: